



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

7 օգոստոսի 2019 թվականի թիվ 82-Ա
ք. Երևան

«ԹԻՎԻ ԿՈՆՏԵՆՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ԹԻՎԻ ԿՈՆՏԵՆՏ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստաձրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի հուլիսի 29-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. Բավարարել «ԹԻՎԻ ԿՈՆՏԵՆՏ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստաձրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստաձրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հեռուստածրագրի անվանումը	Թույլտվության ժամկետի ավարտը
«Պերվիյ կանալ: Վսեմիրնայա սետ» «Կարուսել Ինթերնեյշնլ» «Դոմ կինո» «Բոբյոբ» «Դոմ Կինո Պրեմիում» «Վրեմյա. դայոկոյե ի բլիզկոյե» «Տելեկաֆե» «Մուզիկա Պերվոգո» «Պոբեդա» «Մատչ! Պրեմիեր» «Կինոպրեմիերա» «Կինոխիտ» «Նաշե Նովոյե Կինո» «Ռոդնոյե Կինո» «Կինոմիկս» «Նեստալգիա ՏՎ» «Կինոկոմեդիա» «Ինդիյսկոյե Կինո» «Կինոսերիա» «Կուխնյա ՏՎ» «Ռուսսկայա Նոչ» «365 Դնեյ ՏՎ» «Ավտո Պլուս» «Լյա-Մինոր»	31.12.2019թ.